

**ՀՀ 2019 թվականի պետական բյուջեում
վերաբաշխում, ՀՀ կառավարության 2018 թվականի
դեկտեմբերի 27-ի N 1515-Ն և ՀՀ կառավարության
2019 թվականի մարտի 21-ի թիվ 272-Ն որոշման
մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի
մասին» օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասով՝ **Կառավարությունը որոշում է.**

1. «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2
աղյուսակում կատարել վերաբաշխում և Հայաստանի
Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի
«Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի
կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշման
մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1, 2 ,3 և 4
հավելվածների:
2. Հայաստանի Հանրապետության 2019 թվականի մարտի 21-ի թիվ 272-Ն
որոշման N 3 հավելվածում կատարել փոփոխություններ՝ համաձայն
հավելված 5-ի: